

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртытиун» (образование) еженедельник 24.05.2023թ. չորեքշաբթի թիվ 24 (1101)

## Սերունդներ, դուք ձեզ ճանաչեք Սարդարապատից Սարդարապատ


Հազարամյակների ընթացքում հայ ժողովուրդը մղել է հարյուրավոր ճակատամարտեր, հիմնականում՝ հաղթական: Իրենց նշանակությամբ ամենից հիշարժանը դրանցից երեքն են. **Ավարայրի, Սարդարապատի, Շուշիի...** Եթե **Ավարայրը** մեր հիշողության մեջ մնացած առաջին հայրենական պատերազմն է, նաև՝ աշխարհում հանուն հավատի մղված առաջին խոշոր մարտն ընդհանրապես, որ մեզանում մնաց՝ որպես հանուն հայրենիքի անձնագրության եւ գիտակցված մահի գաղափարական խորհրդանիշ, իսկ **Շուշին** դրան հավելեց նաև նոր ժամանակներում մեր չհնացող ազատասիրության վերածննդի ոգին, ապա **Սարդարապատը**, այդ ամենով հանդերձ, առանձնանում է շատ էական, թերևս մեզ համար ամենից բախտորոշ խորհրդով. նախ՝ **մեզ համար չկան անելանելի վիճակներ, մենք միշտ ուժեղ ենք ավելի, քան պատկերացում ենք, եւ հետո՝ մենք դատապարտված ենք ապավինելու միայն մեր սեփական ուժերին, կարողություններին, հնարավորություններին...** Սեր անհաջողություններն սկսվում են այնտեղ, որտեղ հույսեր ենք փայփայում՝ օգտվելու օտարի բարեկամությունից: Եվ դրան հակառակ՝ չի եղել մի դեպք, երբ մենք հաախմբված եւ ինքնուրույն ելնենք վճռական մարտի կամ այլ գործողության եւ ձախողվենք: **Մենք ոչ միայն եզակի ենք մեր տեսակով ու ստեղծածով, այլև մենակ ենք մեր ճակատագրով:** Սարդարապատն ապացուցեց, որ այդ մենակությունը նաև մեր ազգային իղծերի իրականացման միակ գրավականն է... Մենք լքված էինք, մի կարծ ժամանակահատված՝ թողնված մեր հույսին եւ, թեև եղեռնագարկ, արագորեն համախմբվեցինք, հաղթեցինք եւ վերականգնեցինք մեր անկախ պետականությունը: Այն տեւեց ընդամենը երկու տարի, որովհետև կրկին ապավինեցինք օտարին...

Ռազմական անկասելի հաղթարշավներն անգամ չեն փարատել մեր **երկմտանքը**. հաղթանակի **պտուղները** փորձել ենք վայելել՝ դարձյալ օտարի՝ միջամտությամբ... Ու այդ հոգեբանությամբ շղթայված՝ մեր հաղթանակները չեն դարձել **շարունակական, վերջնական...**

Սարդարապատը **գոյատևելու մի պարզ բանաձև - խորհուրդ է պարգեւել մեզ**. նախեւառաջ, կրկնենք, **ապավինել միայն սեփական ուժերին:** Եւ ապա՝ ամենաանբերեակայելի երազանքն անգամ իրագործելի է մեզ համար, եթե հանդես ենք գալիս ազգի բոլոր շերտերի, ժողովրդի բոլոր հատվածների **միասնական կամքով:**

Ահա այսպես **Սարդարապատը**, արդեն **105** տարի, փորձում է մեզ խրատել ամենաիմաստուն խորհրդով. **ապագան նրանն է, ով չի կրկնում իր սխալները եւ իր հաղթանակները դարձնում է շարունակական:**

Գ.Ս.



### Արամ Խաչատրյան-120

#### 254 միլիոն դրամ՝ միջոցառումների պատշաճ կազմակերպման համար

2023 թվականի հունիսի 6-ին լրանում է հայ մեծանուն կոմպոզիտոր, դիրիժոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Արամ Խաչատրյանի 120-ամյակը: Այդ նպատակով Հայաստանում եւ արտերկրում նախապատրաստվում ու իրականացվում են հոբելյանական միջոցառումներ:

ՀՀ կառավարության որոշմամբ՝ ԿԳՄՍ նախարարության 2023 թվականի բյուջեի հատկացումների հաշվին կատարվել է վերաբաշխում 254 մլն դրամի չափով՝ հոբելյանական միջոցառումների պատշաճ կազմակերպման նպատակով: Այդ գումարի շրջանակում կիրականացվի 2 միջոցառում՝ 177 մլն դրամը կտրամադրվի Արամ Խաչատրյանի 120-ամյակին նվիրված Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի 3 համերգների կազմակերպմանը ԱՄՆ-ում, Կանադայում եւ Հունաստանում, իսկ 77 մլն դրամը՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի հյուրախաղերի կազմակերպմանը Ֆրանսիայում (2 ներկայացում):

շարունակությունը՝ էջ 6

### Սերունդ

#### Ի նպաստ հաղթանակի, թիմի, անհատի պատասխանատվության ոգու զարգացման

Վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** տիկնոջ՝ **Աննա Հակոբյանի** եւ դստեր՝ **Արփի Փաշինյանի** հետ Տավուշի մարզում՝ Դիլիջանի Պարզ լճի տարածքում, ներկա է գտնվել «ՀՀ վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի մրցաշարին:

Վարչապետը մասնակիցներին նախ հանդիպել է մրցաշարի մեկնարկից առաջ եւ բոլորին մաղթել հաջողություններ:

Առաջին անգամ մրցաշարն անցկացվել է երկօրյա ճամբարով: Մրցաշարին մասնակցում էին **11** թիմ՝ յուրաքանչյուրի կազմում **7** աշակերտ (5 տղա, 2 աղջիկ), որոնք հաղթահարեցին **5000** մետր մրցատարածությունը: Երկրորդ տարին անընդմեջ **առաջին** տեղը զբաղեցրել է **Սյունիքի թիմը**, երկրորդ՝ **հորիզոնականը՝ Վայոց Ձորի Արեւիկի թիմը**, իսկ **եռյակը** եզրափակել է **Լոռու մարզի Վանաձորի քաղաքի թիմը:**

շարունակությունը՝ էջ 2

### Ասուլիս

#### Վերջին դասը՝ որպես ուսումնական գործընթացի ամփոփում

Տեղի է ունեցել ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանի** մամուլի ասուլիսը՝ ուսումնական տարվա ավարտի, հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների եւ ծրագրերի վերաբերյալ:

2022-2023 ուստարում հիմնական դպրոցը կավարտի շուրջ **35.300** սովորող, իսկ 12-րդ դասարանը՝ **19.900** շրջանավարտ:

Ուսումնական պլանով վերջին դասը ՀՀ դպրոցներում 5-օրյա աշխատանքային շաբաթի դեպքում սահմանված է **մայիսի 26-ին**, իսկ 6-օրյա դեպքում՝ **մայիսի 27-ին:**

Փոխնախարարը հորդորել է զերծ մնալ լայնամասշտաբ եւ լրացուցիչ ծանրաբեռնվածություն ենթադրող միջոցառումներից. «Վերջին դասը պետք է դիտարկել՝ որպես ուսումնական գործընթացի ամփոփիչ միջոցառում, եւ այն որեւէ կողմի համար պետք է ավելորդ հոգսի չվերածվի»:

շարունակությունը՝ էջ 5

Համաչափ զարգացում

Այց՝ Կոտայքի մարզի կրթամշակութային հաստատություններ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն աշխատանքային այց է կատարել Կոտայքի մարզի մի շարք կրթական ու մշակութային հաստատություններ:



Նախարարին ուղեկցել են Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը, Կոտայքի մարզպետի տեղակալ Վասակ Վարդանյանը եւ Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակութային եւ սպորտի վարչության պետ Կարեն Հունանյանը:

ԿԳՄՍ նախարարի առաջին կանգառը Եղվարդ քաղաքի «AV» թատրոն-ստուդիան էր, որը հիմնադրվել է 2022 թ. հոկտեմբերին: Ժաննա Անդրեասյանը նախ շրջել է թատրոնի փոքրիկ տարածքում, ծանոթացել փորձասենյակի եւ դահլիճի պայմաններին, ապա դիտել «Ամանդա» նորարարական պլաստիկ ներկայացումը, որը շուրջ կես տարի զործող թատրոն-ստուդիայի բեմադրած երկրորդ ներկայացումն էր: Թատրոն-ստուդիայի հիմնադիրներ Անի Վարդանյանի եւ Վիգեն Թադեոսյանի խոսքերով՝ Եղվարդում թատրոն-ստուդիա ստեղծելու գաղափարի հիմքում ընկած էր համայնքում մշակութային կյանքն առավել աշխուժացնելը, ինչպես նաեւ պարավետի եւ թատրոնի հետ անմիջական կապ ունեցող տեղի երիտասարդներին բեմում հանդես գալու հնարավորություն ընձեռելը: Նրանք տեղեկացրել են, որ առաջիկայում նախատեսում են բեմադրել «Փոքրիկ իշխանը» ներկայացումը:



Հաջորդիվ Ժաննա Անդրեասյանն այցելել է Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոց, որտեղ ծանոթացել է դպրոցի հիմնական-ռուցման աշխատանքներին: Դպրոցը կառուցվում է ՀՀ կառավարության եւ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Սեյսմիկ ամրակցության բարելավման» ծրագրի շրջանակում. դպրոցի կառուցումը նախատեսվում է ավարտին հասցնել 2024 թվականին: Ծինարարական ընկերության պատասխանատուն ներկայացրել է իրականացվող աշխատանքները՝ վստահեցնելով, որ դրանք ընթանում են նախատեսված ժամանակացույցին համապատասխան՝ սահմանված նորմերի պահպանմամբ: Դպրոցի տնօրեն Արթուր Տաչյանը փաստել է, որ կառուցվում է ժամանակակից ենթակառուցվածքներով, ճարտարապետական հետաքրքիր լուծումներով, լաբորատորիաներով, մեծ մարզադահլիճով ուսումնական հաստատություն, որը կունենա բարեկարգված, խնամված ու կանաչապատ տարածք եւ կապահովի որակյալ կրթության համար բարենպաստ կրթական միջավայր:

ԿԳՄՍ նախարարն այցելել է նաեւ Կաթնաղբյուր բնակավայր, որտեղ ընթանում են հիմնական դպրոցի նոր մասնաշենքի կառուցման աշխատանքները: Այստեղ կառուցվում է մոդուլային նոր դպրոց, որի հիմնական աշխատանքներն արդեն ավարտական փուլում են: Դպրոցը, ըստ շինարարի, շահագործման կհանձնվի մինչեւ տարեկները:

Ի նպաստ հաղթանակի, թիմի, անհատի պատասխանատվության ոգու զարգացման

սկիզբը՝ էջ 1

Մրցման լավագույն վազորդներն էին Շիրակից Մարի Սարգսյանն ու Սյունիքից՝ Արթուր Համբարձումյանը:

Եզրափակիչ փուլի 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղեր գրաված դպրոցների թիմերի եւ մասնակիցների պարգևները հանձնել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: Լավագույն վազորդներին մրցանակներ է հանձնել վարչապետի տիկին Աննա Հակոբյանը: Մրցաշարին ներկա է գտնվել նաեւ Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

Առաջին տեղ զբաղեցրած դպրոցը ստացել է 4 միլիոն դրամ, երկրորդը՝ 2 միլիոն 500 հազար դրամ, երրորդ տեղը՝ 1 միլիոն 500 հազար դրամ: Առաջին տեղ գրաված թիմի ֆիզկուլտուրայի ուսուցիչը ստացել է 700 հազար դրամ, իսկ թիմում ընդգրկված 7 աշակերտից յուրաքանչյուրը՝ 150 հազարական դրամ: Երկրորդ եւ երրորդ տեղերի համար սահմանված էին համապատասխանաբար 500 հազար դրամ ուսուցիչի, 100 հազարական դրամ՝ աշակերտների, 300 հազար դրամ՝ ուսուցչի եւ 75 հազարական դրամ՝ աշակերտների համար:

Իր խոսքում վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել է.

«Հարգելի՛ ներկայացուցիչներ, Հայրենիքի մասնակիցներ,

Շնորհավորում եմ բոլորիս՝ այսօրվա իրադարձության առիթով: Դուք գիտեք, որ մենք հիմա «Վարչապետի գավաթ» խորագրի ներքո չորս մրցաշար ունենք: Պիտի խոստովանեմ, որ երկու տարվա արդյունքներով ակնհայտորեն այդ նախնական մտահղացմանը, նպատակին, ոգուն ամենաշատը համապատասխանում է խճուղային վազքի դպրոցականների մրցաշարը, եւ ուզում եմ բոլորին շնորհակալություն հայտնել ակտիվ մասնակցության համար: Մենք երեկ եւ այսօր շատ լավ ժամանակ իրար հետ անցկացրեցինք, տեսանք խորհրդանշական իրադարձություններ: Երեկ շատ կարեւոր քննարկում ունեցանք: Այդ քննարկումը, իմիջիայլոց, մրցանակի մասին չէր, այդ քննարկումն անհատի եւ քաղաքականության, անհատի եւ թիմի հարաբերությունների մասին էր: Եվ ես շատ ուրախացա, երբ տեսա, զգացի, որ մեր երեխաները, որոնք այստեղ են



վազքի առիթով, շատ լրջորեն կարողանում են փաստարկել իրենց տեսակետները եւ հիմնավորել իրենց մոտեցումները: Դա չափազանց կարեւոր է: Ես առանձնակի հուզականությամբ հետեւեցի մեր մրցաշարի վերջին մասնակիցներին, այսինքն՝ եզրագծին վերջին մոտեցողներին, եւ ես չգիտեմ այդ կադրը նկարահանվել է որտե՛ւ տեղ՝ նախավերջին մեր մասնակիցը, երբ մոտենում էր եզրագծին, բնականաբար, շատ հոգնած, հասկանում էր, որ ինքը մեծ հավանականությամբ մրցանակային տեղ չի զբաղեցնելու, եւ նա, եզրագծին մոտենալով, վազքով ձեռքը պարզել էր, որպեսզի եզրագծին տրվող իր համարը վերցնի: Եվ եթե լուսանկարվել է այդ կադրը, ես կարծում եմ, որ այդ կադրը կարող է դառնալ մեր այս մրցաշարի ամենակարեւոր սիմվոլներից մեկը: Երեւի Արարատի թիմից էր: Ուզում եմ շնորհակալություն հայտնել, որովհետեւ շատ կարեւոր էր, որ բոլոր մասնակիցները նույնպիսի վճռականությամբ, նույնպիսի հաստատականությամբ սեփական անելիքն անողի շատ պարզ գիտակցությամբ եզրափակեցին մեր մրցաշարը: Ուզում եմ շնորհակալություն հայտնել: Սա մի կարեւոր իրադարձություն է: Եվ կարծում եմ՝ նրանք, ովքեր հետեւել են մրցաշարին, ունեն այդ հարցի պատասխանը, թե ինչու են այսքան շատ պետական բարձրաստիճան անձինք եկել եւ երկու օր զբաղված են այստեղ այս գործով: Սա շատ կարեւոր աշխատանք է, որովհետեւ մենք հասկանում ենք եւ եկել ենք այն եզրակացության, որ շատ հարցեր կան, որոնց լուծումների հետեւից պետք է գնանք՝ ԴՆԹ մակարդակով հասկանալու խնդիրները, եւ այդ մակարդակից սկսելու լուծել դրանք: Գաղտնիք չէ՝ մեր մո-

տեցումն այն է, որ կրթությունից, հանրակրթությունից, դպրոցից, մանկապարտեզից պետք է այդ հաղթանակի ոգին, թիմի ոգին, անհատական պատասխանատվության ոգին զարգանա, եւ մենք տեսնում ենք, որ, ահա, այս մրցաշարը ծառայում է այդ նպատակին»:

Վարչապետը շնորհակալություն է հայտնել մրցաշարի բոլոր կազմակերպիչներին, այդ թվում՝ ԿԳՄՍ նախարարությանը, այն բարձր մակարդակով անցկացնելու համար: Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել նաեւ Առողջապահության նախարարությանը՝ մրցաշարի շրջանակում տեղադրված տաղավարների միջոցով առողջ ապրելակերպը խթանելու համար:

«21-րդ դարում, այո՛, սկզբունքային կարեւոր բան է մարդկանց օգնել, որպեսզի նրանք սովորեն առողջ ապրելակերպին համապատասխան սնվել: Մենք պետք է հասկանանք, որ սա է զարգացման գրավականը՝ սովորել սնվել, սովորել սովորել, սովորել սովորեցնել, սովորել ընկալել, սովորել հասկանալ, սովորել հաղթահարել: Եվ այս միջոցառումը, այս մրցաշարը սրա համար է: Հայրենագիտությունը, հայրենաճանաչությունը շատ կարեւոր է: Նաեւ ուզում ենք՝ այս մրցաշարերն ինչ-որ առումով դիվերսիֆիկացնել մարզերի միջեւ, որպեսզի, այո, մեր ներքին շարժունակությունը մեծանա: Դրա ամունը նույնիսկ տուրիզմ չէ, դրա ամունն է՝ սովորել ծանաչել սեփական Հայրենիքն իր բոլոր անկյուններով, որովհետեւ ճանաչելը հասկանալու, նրա շահերն ընկալելու, նրա ձգտումները հասկանալու ամենակարեւոր միջոցն է»,- ասել է Նիկոլ Փաշինյանը:





Կառավարության նիստում


Գիտություն

Հաստատվել է Մատենադարանի կառավարման խորհրդի ձևավորման նոր կարգը

4,2 միլիարդ դրամ՝ գիտական կենտրոններին

ՀՀ կառավարության նիստում գործադիրը հավանության է արժանացրել «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հիմնադրամի վերակազմավորելու մասին Կառավարության որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին նախագիծը:

կանության իրականացման առանցքային կենտրոններից մեկն է, հետեւաբար, հրամայական է նաեւ կառավարման համակարգի արդիականացումը եւ կանոնադրական նպատակների լիարժեք իրականացմանն անհրաժեշտ սեփական եկամուտների ավելացման նոր միջոցների գործադրումը: Այս համատեքստում հատկապես նկատի են առնվել ցուցադրական համակարգի արդիականացման, ձեռագրական հավաքածուների համալրման խնդիրը, վերականգնման ենթակա գրավոր հուշարձանների ծավալը եւ վերականգնող-մասնագետների աշխատավարձերի վերանայման հրատապությունը: Սա իր հերթին առաջ է քաշել տնօրենի եւ կառավարման բարձրագույն ու վերահսկողություն իրականացնող մարմնի համագործակցության որակապես նոր փոփոխաբերության անհրաժեշտությունը:



քեր, երբ խորհրդի անդամի կարգավիճակ ունեցող Մատենադարանի աշխատակիցն այս կամ այն հարցի վերաբերյալ որոշումներ կայացնելիս կարող է հայտնվել շահերի բախման իրավիճակում: Մատենադարանի աշխատակիցներին խորհրդի կազմում ընդգրկելը միաժամանակ առաջացնում է նաեւ աշխատանքների իրականացման եւ վերահսկողական գործառնության համատեղելիություն, կողմնակալ որոշումներ ընդունելու ռիսկային իրավիճակներ:

Որոշմամբ սահմանվել է, որ Մատենադարանի կառավարման բարձրագույն եւ հսկողություն իրականացնող մարմինը խորհուրդն է, որը բաղկացած է 13 անդամից: Խորհրդի անհատական կազմը հաստատվում է ՀՀ վարչապետի որոշմամբ՝ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի ներկայացմամբ: ԿԳՄՍ նախարարը խորհրդի նախագահն է՝ ի պաշտոնե: Մեկական ներկայացուցիչ նշանակվում է ՀՀ նախագահի աշխատակազմից, ՀՀ վարչապետի աշխատակազմից, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալներից, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալներից, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալներից, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Ի պաշտոնե խորհրդի անդամ են նշանակվում ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարը, ՀՀ գիտության կոմիտեի նախագահը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահը, «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրենը, Մատենադարանի գլխավոր ավանդապահը, Մատենադարանի տնօրենի խորհրդակալը՝ նորագույն տեխնոլոգիաների եւ հրատարակչական հարցերի գծով:

Միջոցը, ելնելով Մատենադարանի ազգային ու միջազգային կարեւորությունից, անհրաժեշտ է համալրել խորհուրդը գիտական, մշակութային, կրթական եւ ֆինանսական քաղաքականություն մշակող եւ իրականացնող պետական գերատեսչությունների բարձր ներկայացվածությամբ, տնտեսական անվտանգության ապահովման եւ մաքսային վարչարարության մարմինների ներկայացուցիչների ընդգրկմամբ՝ նկատի առնելով նաեւ Մատենադարանի ֆինանսների կառավարման, իր կանոնադրությամբ սահմանված ձեռնարկատիրական, մաքսային ընթացակարգեր պարունակող գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը:

Համաձայն որոշման հիմնավորման Մատենադարանը, որը հայության մտավոր ժառանգության գանձարանն է, գիտահետազոտական ինստիտուտի եւ թանգարանի գործառնությունները զուգակցող, միջազգային ճանաչում են բարձր վարկանիշ ունեցող հաստատություն է, որը դարձել է նաեւ Հայաստանի խորհրդանիշներից մեկը: Մատենադարանը գիտահետազոտական, մշակութային եւ կրթական ոլորտներում պետական քաղաքա-

Մինչդեռ, ելնելով Մատենադարանի ազգային ու միջազգային կարեւորությունից, անհրաժեշտ է համալրել խորհուրդը գիտական, մշակութային, կրթական եւ ֆինանսական քաղաքականություն մշակող եւ իրականացնող պետական գերատեսչությունների բարձր ներկայացվածությամբ, տնտեսական անվտանգության ապահովման եւ մաքսային վարչարարության մարմինների ներկայացուցիչների ընդգրկմամբ՝ նկատի առնելով նաեւ Մատենադարանի ֆինանսների կառավարման, իր կանոնադրությամբ սահմանված ձեռնարկատիրական, մաքսային ընթացակարգեր պարունակող գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը:

Հեղինակ՝ ԳՊԿՅԱՆՆԻՍՅԱՆ

Որպես հաշվետվություն

Կրթության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնավարման 100 օրը

Կրթության տեսչական մարմնի ղեկավար Վաղարշակ Մատիկյանը «Արմենպրես» լրատվական գործակալությունում ամփոփել է իր պաշտոնավարման 100 օրը: Ըստ բանախոսի այս ընթացքում իրականացվել են երեք հիմնական աշխատանքներ՝ ստուգաթերթերի վերանայում-լավարում, որոնց հիման վրա ուսուստատություններում իրականացվում են ստուգումները, ռիսկերի մեթոդաբանության վերանայում-լավարում եւ թվայնացման աշխատանքների շուրջ քննարկումներ:

Պարոնցներ են, 9-ը՝ ՄԿՈՒ, իսկ 11-ը՝ նախադարձական հաստատություններ: «Բնականաբար, տարվա ընթացքում ստուգումներ իրականացվում են նաեւ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում, օրինակ՝ դիմում-բողոքների կամ պետական մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա: 2023 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ստուգումներ են իրականացվել 37 ուսուստատությունում: Այս պահին արդեն մշակվել են 30-ում իրականացված ստուգման արդյունքները: 7-ի արդյունքները մշակման փուլում են եւ կներկայացվեն երկրորդ եռամսյակի ընթացքում: Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է օրենսդրության շուրջ 502 խախտում՝ 30 ուսուստատությունում», - փաստել է տեսչական մարմնի ղեկավարը:



«Գերակշռում են տնօրենի ներկայացվող պահանջների խախտումները. արձանագրվել են նաեւ կրթության կազմակերպման գործընթացի խախտումներ: Դիտարկվում են՝ արդյոք ուսուստատությունների խորհուրդները պատշաճ ձևով ներգրավված են կառավարմանը: Սա շատ կարեւոր է, որովհետեւ եթե խորհրդի աշխատանքը

կանացրել է դասալուսմներ, տրվել են գրավոր աշխատանքներ՝ «Հայոց լեզու» եւ «Մաթեմատիկա» առարկաներից, որոնց մասնակցել է շուրջ 500 աշակերտ: Տրված գրավոր աշխատանքների միջին գնահատականը մաթեմատիկայի համար եղել է 5 միավոր եւ 5.3 միավոր՝ հայոց լեզվի համար: Շուրջ 70 տոկոսը գնահատվել է բավարար:

«Ցուցանիշը մտահոգիչ է, թե ոչ, միանշանակ ասել ճիշտ չէ. կարելի է, որ չափորոշիչ նվազագույն պահանջը կատարվի: Միջին գնահատականը 5 միավոր է, իսկ դա նշանակում է՝ անբավարար չէ: Մեր գրավորների գնահատականները կտրուկ տարբերվում են մատյաններում տեղ գտած գնահատականներից, սակայն այստեղ պետք է հաշվի առնել այն փաստը, որ տարբերության գնահատականն իր մեջ այլ բովանդակություն է նաեւ կրում», - նշել է Վաղարշակ Մատիկյանը: Նրա խոսքով այս տարվա ցուցանիշները նախորդ տարվա աշակերտային մնացորդային գիտելիքների ստուգման տվյալներից փոքր-ինչ դրական տարբերությամբ բարելավվել են:

Հ. ԳՊԿՅԱՆՆԻՍՅԱՆ

Խորհրդարան

«ԲանՈՒԳործ. ԵՊՅ էքսպո-2023»

Կիստակեցվի կրթության հիմքով գորակոչից տարկետման վարչարարությունը

«Կրթությունը հանրային բարիք է»



Ազգային ժողովի նիստում առաջին ընթերցմամբ քննարկվել է «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծը:

Հարցը գեկուցել է ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը՝ նշելով, որ նախագծով առաջարկվում է հանրակրթական, նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողների անընդհատ կրթության համար բարելավել պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման վարչարարությունը:

Նախարարը հայտնել է, որ մեր երկրում պարտադիր է 12-ամյա հանրակրթությունը, որը կարող է իրականացվել դպրոցներում կամ 9-րդ դասարանից հետո՝ նաև նախնական կամ միջին մասնագիտական հաստատություններում: Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով նախատեսված է, որ մինչև 19 տարեկան լրանալն այն սովորողները, որոնք դեռևս չեն ավարտել իրենց ուսումնառությունը, ավտոմատ կերպով օգտվում են տարկետման իրավունքից: Նրա խոսքով՝ առկա են դեպքեր, երբ որոշ հանգամանքներից ելնելով՝ 19 տարեկան լրանալուց հետո սովորողը դեռևս չի ավարտել իր ուսումնառությունը: Այս պարագայում եւս ցրանք կարողանում են առանց ընդհատման շարունակել իրենց կրթությունը, հետո նոր անցնել պարտադիր զինվորական ծառայության:

«Սակայն, գործող օրենքն ունի որոշ անհարթություններ, որոնք առաջ են բերում խնդիրներ: Մասնավորապես՝ օրենքով սահմանափակված են այն հիմքերը, որոնք կարող են կիրառվել 19 տարեկան լրացած սովորողի՝ անընդհատ կրթության իրավունքի պահպանման տեսանկյունից: Պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում կարող է տրվել տարբեր հիմքերով՝ առողջական վիճակը, ընտանեկան պայմանները եւ այլն: Եվ բոլոր այն դեպքերում, երբ տարկետումն ունեցել է այլ հիմք, քան սովորելը, առաջացել են անհարթություններ եւ խնդիրներ: Հետեւաբար, առաջարկվող փոփոխությամբ կիստակեցվել են օրենքով սահմանված հիմքերից որեւէ մեկի առկայության պարագայում անընդհատ կրթության հնարավորությունը, ինչպես նաև ավելի հստակ է դարձել առանց ընդհատման բառերի ավելացմամբ այս իրավունքի պահպանումը»,- ընդգծել է նախարարը:

Ժաննա Անդրեասյանը վստահեցրել է, որ փոփոխությունն էապես կհեշտացնի վարչարարությունը եւ կբարելավի բազմաթիվ մարդկանց՝ սովորելու եւ այդ ընթացքում տարկետումից անխափան կերպով օգտվելու հնարավորությունը:

Ըստ նախարարի՝ քանի որ արդեն ամառային գորակոչի ընթացքում նշյալ կարգավորման կիրառման կարիք կա, առաջարկվել է նախագիծը քննարկել հատուկ ընթացակարգով:

Ձեկույցից հետո նախարարը պատասխանել է նաև Աժ պատգամավորների հարցերին:

Հարակից գեկուցող Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Հակոբ Ասլանյանը նշել է, որ գլխադասային հանձնաժողովը նախագծին տվել է դրական եզրակացություն վստահեցնելով, որ առաջարկվող փոփոխություններով ավելի պաշտպանված կլինի սովորողների կրթության իրավունքը:

Երեւանի պետական համալսարանում անցկացվել է «ԲանՈՒԳործ 2023. կրթության եւ կարիերայի հնարավորությունները Հայաստանում» խորագրով գիտաժողով, որի բացմանը մասնակցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը:

Գիտաժողովը կազմակերպվել էր «ԲանՈՒԳործ. ԵՊՅ էքսպո-2023» խորագիրը կրող ցուցահանդեսի շրջանակում, որը նվիրված էր ԵՊՅ հիմնադրման 104-ամյակին:

Միջոցառմանը ներկա են եղել նաև Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, Ազգային ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը, գործատուներ, կրթական ոլորտի ներկայացուցիչներ, ուսանողներ:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է գիտաժողովի մասնակիցներին, ինչպես նաև շնորհավորել ԵՊՅ հիմնադրման օրվա, Ուսանողների եւ երիտասարդների օրվա կապակցությամբ:

«Բարձրագույն կրթության համակարգը լուծում է մասնագիտական կրթության ապահովման, երկրում անհրաժեշտ մասնագիտական կադրային ներուժի զարգացման խնդիրներ, սակայն բարձրագույն կրթության դերը միայն այսքանով չի սահմանափակվում: Կրթությունը հանրային բարիք է, եւ դա փաստում են բազմաթիվ հետազոտություններ, այն կապիտալ է, որի իրացման հնարավորություններն անսպառ են: Բարձրագույն, ֆորմալ կրթությունը ներկա փոփոխվող աշխարհում պետք է գտնի նորանոր ձևեր՝ դառնալու առավել արդյունավետ ու ճկուն: Ուսանողները փոխել են իրենց մոտեցումները կրթական գործընթացի հանդեպ: Նրանք ցանկանում են սովորել ավելի արագ, կյանքի տարբեր ասպարեզներում դրսևորել իրենց, այդ թվում՝ աշխատանքային գործունեության մեջ, ուստի բուհական կրթությունը պետք է գնա միկրո-որակավորումների, մասնակի որակա-

վորումների ճանապարհով: Հետեւաբար, կրթական ծրագրերը նոր մոտեցմամբ պետք է իրականացվեն՝ սահմանելով բաղադրիչներն ու հմտությունները: Մենք ակադեմիական կրթությունը եւ ժամանակակից զարգացող աշխարհի արագության պահանջը պետք է ճիշտ համադրենք, որպեսզի չտուժի կրթության որակը»,- նշել է Ժաննա Անդրեասյանը:

Նախարարը նաև փաստել է, որ ՀՀ կառավարությունը սահմանել է հավակնոտ թիրախներ. բուհերի շրջանավարտների 90 տոկոսն ավարտելուց հետո պետք է կարողանա աշխատանք գտնել մասնագիտությամբ. «Այս թիրախներին հասնելու համար առաջին հերթին պետք է բուհերի միջազգայնացմանը եւ մրցունակության բարձրացմանն ուղղված աշխատանքներ իրականացնել»:

Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ողջունելով ներկայից եւ եւս մեկ անգամ շնորհավորելով Մայր բուհի 104-ամյակը, ընդգծել է, որ ԵՊՅ-ն այն հաստատությունն է, որ դառնալու է հանրային հաղորդակցության լավագույն հարթակ:

«Այսօր մենք ապացուցում ենք, որ ունենք բոլոր հնարավորությունները՝ այդ հարթակի դերը կատարելու ոչ միայն ԵՊՅ-ի ուսանողների եւ դասախոսների, այլև հանրության լայն շրջանակի համար: Մեր գործողությունները բխում են կրթության պետական ռազմավարությունից եւ համահունչ են ԿԳՄՍ նախարարության ծրագրերին»,- ասել է Հովհաննես Հովհաննիսյանը:

Ազգային ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը նշել է, որ տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ՝ կրթությունն ստանալու հնարավորությունները շեշտակի աճել են, գործատուները սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել կադրերի պատրաստվածությանը. «Կարելու է, որ բուհական ակադեմիական կրթությունը համապատասխան լինի աշխատաշուկայի պա-

հանջարկներին, եւ այս ուղղությամբ մեծ աշխատանքներ պետք է տարվեն»:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը շրջել է «ԲանՈՒԳործ. ԵՊՅ էքսպո-2023» ցուցահանդեսի տաղավարներով: Կարելու էր ցուցահանդեսի դերը նա նշել է, որ պետք է բուհերի եւ գործատուների միջև կապն ամրապնդել. «Շատ հաճախ մենք չունենք բավարար տեղեկատվություն, թե ինչ կրթական ծրագրերով, ինչպիսի մասնագետներ կան մեր բուհերում, հետեւաբար, նաև գործատուների համար համապատասխան կադրեր գտնելը կարող է շատ երկար ժամանակ պահանջել: Այդ իսկ պատճառով շատ կարելու է, որ տեղեկատվությունը պատշաճ փոխանցվի եւ կապը մշտապես պահվի բուհերի եւ գործատուների միջև: Շատ կարելու է նաև, որ այդ համագործակցության ընթացքում գործատուներն էլ ներկայացնեն իրենց պահանջները, թե ինչպիսի հմտությունների, գիտելիքների կարիք ունի տնտեսությունը: Կրթական համակարգը պետք է լինի բավարար ճկուն արձագանքելու, փոփոխելու ու թարմացնելու ծրագրերը, նոր մոդուլներ ավելացնելու եւ մասնագիտություններ բացելու առումով»:

«ԲանՈՒԳործ. ԵՊՅ էքսպո-2023» ցուցահանդեսի հիմնական նպատակն էր ներկայացնել կրթական եւ աշխատանքային հնարավորությունները, ապահովել արդյունավետ հաղորդակցություն գործատուների, շրջանավարտների եւ ուսանողների միջև, ինչպես նաև համապարփակ թեմատիկ քննարկումների միջոցով վերհանել կրթական համակարգի եւ գործատուների հետ առկա համագործակցության առանձնահատկությունները, խնդիրներն ու զարգացման հեռանկարները:

Ցուցահանդեսի շրջանակում ուսանողներին հնարավորություն էր տրվել հանդիպելու ապագա գործատուներին, դիմորդներին ծանոթանալու մրցունակ կրթական ծրագրերին, իսկ գործատուներին՝ ներկայացնելու իրենց աշխատանքային հնարավորությունները:















## Կրթությունն աշխարհում. Գերմանիա

Գերմանիայում առաջին ուսումնական հաստատությունները, ինչպես եվրոպական շատ երկրներում, ի հայտ են եկել մոտավորապես 7-րդ դարում, ինչը կապված էր քրիստոնեության տարածման հետ: Վանքերում գործում էին վանական դպրոցներ, որտեղ, Աստվածաշունչը լատիներեն կարդալուն զուգահեռ, ուսումնասիրում էին «յոթ ազատական արվեստները»՝ տրիվիումը (քերականություն, հռետորաբանություն և ռիթմիկական «Գիտություն բնության, մարդկային հասարակության և մտածողության շարժման ու զարգացման ընդհանուր օրենքների մասին» (Ֆ. Էնգելս)) և կվադրիումը (թվաբանություն, երկրաչափություն, աստղագիտություն և երաժշտություն): Քաղաքներում բացվել էին տաճարային դպրոցներ, որտեղ աշակերտները ստանում էին ավելի լայն կրթություն և ավելի խորությամբ ուսումնասիրում «յոթ ազատական արվեստները»:

Բնակչության ցածր խավի երեխաները գիտելիքներ ստանում էին ծխական դպրոցներում: Արիստոկրատները, ֆեոդալները իրենց երեխաներին ասպետական դաստիարակության էին տալիս. երեխաներին մինչև 7 տարեկանը մեծացնում էին տանը, այնուհետև ուղարկում սյուզերենի (Սուզերեն - Արեւմտյան Եվրոպայում միջնադարում, խոշոր ֆեոդալ, տարածքի գերագույն տերը (թագավոր, դուքս, իշխան): Սյուզերենի իշխանությունը հիմնված էր նրանց վասալին ֆեոդո (հողային սեփականություն) 14 նորից վրա: մոտ, որտեղ նրանք մինչև 14 տարեկանը որպես պաժեր (Պաժ (Page) - միջնադարյան Արեւմտյան Եվրոպայում ազնվական ընտանիքի տղա, ով ծառայության մեջ էր ազնվական մարդու մոտ որպես անձնական ծառայող: Միջնադարում պաժը ասպետի կոչման առաջին աստիճանն էր: Ազնվականը, ցանկանալով իր որդուն թագավորի կամ ֆեոդալի պաժ դարձնել, պետք է ապացուցեր իր հոր կողմից չորս սերունդ ազնվականություն: Պաժերը դաստիարակվել ու ապրել են այն մարդու հաշվին, ում հետ եղել են. նրանց պարտականությունների մեջ էին տվյալ անձի հետ հերթապահություն կատարելը, անձնական և զինվորական կյանքում ուղեկցելը և ծառայություններ մատուցելը (երբեմն չափազանց կարելորդ): Թագավորների կամ ֆեոդալների կամայք նույնպես ունեին իրենց պաժերը: էին:

Այդ ընթացքում նրանք պետք է տիրապետեին «յոթ ասպետական առաքինություններին»՝ որսի, ձիավարելու, սուսերամարտի, նետածության, սիրած կնոջ պատվին բանաստեղծություններ ստեղծելու և

երգելու կարողությամբ, իրենց մեջ զարգացնելին այնպիսի բնավորության գծեր, ինչպիսիք են քաջությունը, հաստատակամությունը, հավատարմությունը սուզերեններին: Նման կրթության մեջ նշանակալի տեղ էր հատկացվում կրոնին, ինչպես նաև պալատական վարվելակարգի տիրապետելուն:

Միջնադարի ծաղկման շրջանում արհեստների և առևտրի զարգացման հետ մեկտեղ, եկեղեցուց համեմատաբար անկախ, ի հայտ եկան արհեստավորների և վաճառականների դպրոցներ, որտեղ սովորեցնում էին կարգալ, գրել և թվաբանություն: XIII-XIV դդ. Գերմանիայում բացվեցին առաջին համալսարանները՝ Զայդելբերգը, Քյոլնը, Էրֆուրտը:

19-րդ դարում դպրոցները զարգացան ոչ թե կրթության տեսաբանների հրահանգներով, սահմանադրությամբ ու դպրոցական օրենքներով, այլ պետության ու հասարակության հնարավորությունների, կարիքների, պահանջումների հիման վրա:

1800 թվականից մինչև մեր օրերը Գերմանիայում գոյություն է ունեցել կրթական համակարգի երկու ձևի կառուցվածք: 19-րդ դարի սկզբին ձևավորվեցին հանրակրթության կառուցվածքի առաջին ձևի բաղադրիչները՝ «տարրական դպրոցը» և «գիտական դպրոցը» (այդ դպրոցները իրարից անկախ գործող, առանձին դպրոցներ էին): Բնակչության ամենաաղքատ հատվածի համար պարտադիր էին միայն տարրական դպրոցները: XX դարում ի հայտ եկավ կրթության երկրորդ տեսակը՝ «երեք տիպի համակարգը»: Այդ դպրոցների ուսումնական պլանը համալրված էր այնպիսի առարկաներով, ինչպիսիք են պատմությունը, աշխարհագրությունը, բնագիտությունը, իսկ կրոնական կրթությունը, որը միջնադարում էր ավելացվել, անկում ապրեց: Հանրակրթական դպրոցների հետ մեկտեղ՝ 70-ականների սկզբին առաջացավ, այսպես կոչված, «միտելշուլեն», որը հանրակրթական դպրոցի ընդլայնված ձևն էր՝ հինգ վերկառուցված դասարաններով, որոնք համապատասխանում էին առևտրի և արհեստագործության շահերին: Հարուստ ծնողների երեխաները, որպես կանոն, հաճախում էին ոչ թե հանրակրթական տարրական դպրոցներ, այլ եռամյա «նախապատրաստական դպրոցներ», որտեղ նրանք նախապատրաստվում էին միջնակարգ դպրոցների անցմանը: Կրթության մեջ առաջատարը հունամիտար գիմնազիան էր՝ լատիներեն ու հունարեն հիմնական առարկաներով: Կար նաև դպրոցների մեկ այլ տեսակ՝ քաղաքային, որը հիշեցնում է

«հանրակրթական մոդելը՝ «նախապատրաստական դպրոց», «դպրոց» և «գիմնազիա» կրթական աստիճաններով: Մինչև XIX դարի վերջը համալսարան ընդունվելու հնարավորություն էր տալիս միայն 9-ամյա հունամիտար գիմնազիան:

Այսպիսով, 19-րդ դարի գերմանական դպրոցը պատմության մեջ անցել է դուալիզմի նշանով՝ տարրական և միջնակարգ դպրոցներով, որոնցից յուրաքանչյուրը ստեղծել է 20-րդ դարի սկզբի «եռակի համակարգի» առաջացման կարելուրագույն նախադրյալները:

20-րդ դարի կրթության զարգացման պատմության ամենակարևոր իրադարձությունը համընդհանուր, պարտադիր 4-ամյա տարրական դպրոցի ներդրումն էր. վերացան մասնավոր նախապատրաստական դպրոցները, փոխվեցին հանրակրթական դպրոցների տեսակների և տարրական դպրոցի հենքի վրա կառուցվող դպրոցների անվանումները, սակայն պահպանվեց դրանց գործունեության տարբերությունը: Տարրական դպրոցին հաջորդում են տարբեր գործունեությամբ դպրոցներ՝ «հիմնական դպրոց» (Hauptschule) այնուհետև դպրոցներ, որոնք թույլատրում էին շարունակական կրթություն «ոչ լրիվ միջնակարգ դպրոցներ» կամ «իրական» (Realschule) դպրոցներ՝ 4-ից 6 տարի ուսման տևողությամբ, և 7-ից 9-ամյա դպրոցներ՝ «միջնակարգ դպրոցներ» (Gymnasium) կամ գիմնազիաներ: Բացի հանրակրթական դպրոցներից՝ գործում է նաև արհեստագործական կրթական համակարգ:

### Գերմանիայի ժամանակակից կրթական համակարգը

Գերմանիայում կրթական համակարգը հնարավորություն է տալիս ցանկացած անձի զարգացնել իր անհատականությունը, ազատորեն ընտրել դպրոց, համալսարան և մասնագիտություն ըստ իր նախասիրությունների և կարողությունների: Կրթական քաղաքականության նպատակն է յուրաքանչյուր մարդու հնարավորություն ընձեռնել ստանալու մասնագիտական կրթություն, որը կբավարարի իր բոլոր կարիքներն ու հետաքրքրությունները:

Այս բարձր զարգացած արդյունաբերական պետությանը անհրաժեշտ են բարձր որակավորում ունեցող մասնագետներ: Երկրի կառավարությունը շահագրգռված է տարբեր գիտական ոլորտներում մասնագիտական կադրերի որակյալ վերապատրաստմամբ:

Գերմանիայում կրթական համակարգը

ներառում է ուսուցում և պետական, և մասնավոր ուսումնական հաստատություններում:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը բաժանված է 16 վարչատարածքային միավորների՝ երկրամասերի: Կրթական համակարգի ղեկավար մարմիններն են ԳԴՀ Կրթության նախարարների համաժողովը (Kultusministerkonferenz), ինչպես նաև ԳԴՀ ռեկտորների համաժողովը (Bundeskanzlerkonferenz): Երկրամասերի մակարդակով կրթական գործընթացը ղեկավարում են համապատասխան նախարարությունները:

### Նախադպրոցական կրթության համակարգը Գերմանիայում

Գերմանիայում նախադպրոցական հաստատությունների համակարգը մեր չափանիշներով այնքան էլ հարմար չէ: Դա պայմանավորված է մանկապարտեզների ժամային ռեժիմով: Օրինակ՝ մանկապարտեզները, ընդհանրապես, աշխատում են ժամը 7-ից 12-ը: Եթե մանկապարտեզը բաց է մինչև երեկոյան ժամը չորսը, ապա ծնողը չի կարող երեխային ավելի շուտ վերցնել այնտեղից: Գերմանիայում երեխաների համար նախադպրոցական դասարաններ չկան: Մանկապարտեզները չեն վերահսկվում կրթության նախարարության կողմից, ուստի դրանց համար համապատասխան ծրագիր չի մշակվել: Ծնողներն իրենք են զբաղվում երեխաների կրթությամբ կամ երեխաներին ուղարկում են զարգացնող խմբակներ:

### Դպրոցական կրթական համակարգը Գերմանիայում

Գերմանիայում ընդհանուր կրթությունն անվճար է: Իննամյա դպրոցական կրթությունը պարտադիր է բոլորի համար: Բուհ ընդունվող երեխաների համար կրթական համակարգը նախատեսված է 12-13 տարվա համար:

Գերմանիայում այսօր շուրջ 50 հազար դպրոց գործում է ավելի քան 12 միլիոն դպրոցականների համար:

Դպրոցական համակարգը բաժանված է երեք մակարդակների՝

- տարրական (մինչև 4-րդ դասարան),
- առաջին միջնակարգ (4-ից 10-րդ դասարաններ),
- երկրորդ միջնակարգ (10-ից 13-րդ դասարաններ):

Հարունակությունը՝ էջ 11



Քյոլնի համալսարանը

# Կրթությունն աշխարհում. Գերմանիա

## սկիզբը՝ էջ 10

Վեց տարեկանը բոլորած երեխաները հաճախում են տարրական դպրոց (Grundschule): Տարրական դպրոցում կրթությունը տևողությունը չորս տարի է, ծանրաբեռնվածությունը՝ շաբաթական 20-30 ժամ:

Տարրական դպրոցն ավարտելուց հետո երեխաները կարող են շարունակել իրենց կրթությունը Hauptschule (հիմնական դպրոց), Realschule (իրական դպրոց), Gymnasium (միջնակարգ դպրոց) կամ Gesamtschule (իրական և միջնակարգ համակցված դպրոց) առանձին դպրոցներում: Ամենաթույլ սովորողները հաճախում են Hauptschule (հիմնական դպրոց), կրթության տևողությունը 5 տարի է, շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 30-33 ժամ: Այնտեղ նրանք կարող են ստանալ միայն հիմնական կրթություն:

Հիմնական դպրոցն ավարտելուց հետո շրջանավարտը կարող է շարունակել ուսումը այլ հաստատությունում, ստանալ մասնագիտական կրթություն կամ անցնել աշխատանքի:

Միջինից բարձր արդյունքներ ունեցող սովորողները հաճախում են Realschule (իրական դպրոց) և սովորում 6 տարի: Այդպիսի դպրոցները բավականին բարձր կարգավիճակ ունեն են մասնագիտական կրթություն են տալիս առևտրի, ծառայությունների և հանրային ծառայության ոլորտներում: Ուսումնառության արդյունքում ստացված բարձր միավորը հեշտացնում է գիմնազիա, իսկ հետո՝ համալսարան ընդունվելը:

Դպրոցների ամենահեղինակավոր տեսակը Gymnasium-ն է (գիմնազիան), որի դիպլոմը թույլ է տալիս առանց քննությունների ընդունվել բազմաթիվ համալսարաններ: Գիմնազիաները, որպես կանոն, մասնագիտացված են հումանիտար կրթության ոլորտում: Տասներեքերորդ դասարանի աշակերտներն արդեն դիմորդներ են, նրանք ուղղակիորեն պատրաստվում են համալսարանում սովորելու: Այդ դասարանում նախապատրաստական ուսուցման որակը և տարեվերջյան քննությունների բարդությունը շատ բարձր է: Քննություններ հանձնվում են հիմնական դպրոցական ուսումնական առարկաներից (Abitur):

Վերոնշյալ երկու տիպի հաստատությունների հիմնական հատկանիշները համակցված են Gesamtschule-ում (համակցված դպրոց): Ուսման տևողությունը 6 տարի է, այսինքն՝ հինգից տասներորդ դասարան: Համակցված դպրոցի ավագ դասարանները հաջողությամբ ավարտելու դեպքում սովորողին տրվում է Hochschulreife (հասունության վկայական (Հասունության վկայական-միջնակարգ հանրակրթական դպրոցի ավարտման վկայական)): Այդ

փաստաթուղթը բավական է համալսարան ընդունվելու համար:

Բացի վերը նշված ձևի դպրոցներից, գերմանական կրթական համակարգը ներառում է տարբեր մակարդակների և պրոֆիլների հատուկ դպրոցներ ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող սովորողների համար, դրանք կոչվում են Sonderschule:

Գերմանիայում կրթական համակարգը սահմանում է բուհ ընդունվելու չափանիշային կանոններ: Համալսարանում սովորելու ընդունելությունը Abitur դիպլոմով է: Այդ փաստաթուղթը տրվում է գիմնազիայում կամ համակցված դպրոցում սովորելու արդյունքների հիման վրա: ՅՈՒՆԵՍԿՕ-ի ISCED կրթության ստանդարտների միջազգային դասակարգումը սահմանում է, որ այդ պահանջները համապատասխանում են տասնամյա կամ տասնմեկամյա դպրոցական համակարգ կիրառող երկրների համալսարանների երկրորդ կուրսին (օրգ ՌԴ-ում): Ավարտական քննությունների միջին միավորը ամենակարևոր չափանիշն է համալսարանում սովորելու հնարավորություն ստանալու համար: Գերմանիայում բուհերի ընդունելության քննություններ չկան: Եթե դիմորդներն ավելի շատ են, քան անվճար տեղերը, ապա ընդունվում են միայն լավագույնները:

Գերմանիայում դպրոցական կրթական համակարգի մաս են համարվում, այսպես կոչված, studienkollegs՝ նախահամալսարանական քոլեջները, որոնք թույլ են տալիս միջնակարգ կրթության անբավարար մակարդակ ունեցող օտարերկրյա սովորողներին լրացնել գիտելիքների բացը և ընդունվել գերմանական համալսարաններ:

### Բարձրագույն կրթության համակարգը Գերմանիայում

Գերմանիայի պետական բուհերում բարձրագույն կրթությունը Գերմանիայի քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրացիների համար, որպես կանոն, անվճար է: Միայն տնտեսապես և քաղաքականապես կայուն երկիրը կարող է իրեն թույլ տալ նման պետական քաղաքականություն կրթության ոլորտում: Այն նպաստում է պետության համար որակյալ աշխատուժի ձևավորմանը, քանի որ գերմանական համալսարանն ավարտած օտարերկրացիների զգալի մասը շարունակում է աշխատել Գերմանիայում:

Դա ամիրաժեշտ է նաև գերմանական ընկերությունների ապագա գործընկերների ձեռքբերման համար, քանի որ շատ օտարերկրյա սովորողներ վերադառնում են հայրենիք, իրենց մասնագիտությամբ լավ վարձատրվող աշխատանք են ունենում և արագ բարձրանում կարիերայի սանդուղքով: Համաձայն ներգաղթի մասին օրենքի գերմա-

նական բուհերը հաջողությամբ ավարտած օտարերկրյա ուսանողները հնարավորություն ունեն մեկ տարով աշխատել երկրում:

### Գերմանիայի կրթական համակարգի առանձնահատկությունները

Գերմանիայում բարձրագույն կրթությունը զգալիորեն տարբերվում է հայկական կրթական համակարգից: Գերմանական բարձրագույն կրթության կազմակերպման հիմնարար սկզբունքներից է ակադեմիական ազատությունը: Համալսարանի ուսանողները ունեն ընտրության և գործելու ազատություն, սակայն դա պահանջում է նրանցից ինքնակարգապահություն և պատասխանատվություն: Գերմանիայում ուսուցումը կազմակերպվում է այն տրամաբանությամբ, որ համալսարանի ուսանողը պարտավոր չէ դասերին հաճախել դասընկերների հետ միասին (այս երկրում նման հասկացություն ընդհանրապես չկա): Նա պետք է ընտրի որոշակի մասնագիտություն և ուսումնական ծրագիր, կազմակերպի ուսուցման պլանը և անձնական ժամանակը համապատասխան այն պահանջներին, որոնք վերաբերում են այդ ծրագիրը ընտրողներին: Ուսանողը կարող է ազատ ընտրություն սկզբունքով մասնակցել սեմինարների և դասախոսությունների, ընտրել ժամանակ պրակտիկայի համար, ինչպես նաև ազատ ժամանակ հատկացնել կես դրույքաչափով աշխատանքի համար:

### Երկակի կրթությունը Գերմանիայում

Երկակի կրթական համակարգի առավելությունն այն է, որ համալսարանի շրջանավարտները ստանում են բարձրագույն կրթության դիպլոմ և միաժամանակ ունենում են երկարաժամկետ աշխատանքային փորձ: Վերջին տարիներին երկակի ուսուցումը Գերմանիայում ավելի ու ավելի է տարածում գտնում դպրոցական շրջանավարտների շրջանում: Տնտեսության համար այն նույնպես դրական ցուցանիշ է ապահովում:

- վերջին տասը տարիների ընթացքում կրկնապատկվել է ուսանողների թիվը, ովքեր պատրաստ են ուղղակիորեն աշխատանքի վայրում սովորել,
- Գերմանիայում գործազրկության մակարդակը նվազում է, իսկ եվրոպական այլ երկրներում այն հասնում է կրիտիկական կետի:

Երկակի համակարգը տեսականորեն կարելի է նկարագրել հետևյալ կերպ. հատուկ ժամանակացույցի համաձայն ուսանողները հաճախում են համալսարանի դասերին և հաստատված օրերին, զուգահեռաբար աշխատում են ֆիրմայում կամ

կազմակերպությունում, մասնակցում են արտադրական նախագծերին, ստանում աշխատավարձ (600-ից մինչև 1000 եվրո), իրավունք են ունենում գնալ արձակուրդ, ինչպես մնացած աշխատողները:

Ուստի կազմակերպության ղեկավարության համար ավելի հարմար է դիպլոմ ստանալուց հետո ապահովել աշխատանքով հենց իրենց պրակտիկանտին, քան նոր թեկնածու փնտրել և վերապատրաստել: Որոշ խոշոր ընկերություններում, օրինակ Volkswagen-ում, երկակի համակարգի համար դիմելիս ուսանողի հետ պայմանագիր է կնքվում, ըստ որի՝ ընկերությունը պարտավորվում է նրան աշխատանքի ընդունել, եթե նրա ավարտական միավորը բավական բարձր լինի: Այս դիրքորոշումը հաստատվում է նաև Մասնագիտական ուսուցման դաշնային ինստիտուտի (Bundesinstituts für Berufsbildung - BIBB) ուսումնասիրությամբ: Հարցված ընկերությունների 76%-ը գնահատում է իրենց շրջանավարտների գերազանց իմացությունը արտադրության ընթացքի և տնտեսական գործընթացների վերաբերյալ: Յուրաքանչյուր երկրորդ ընկերություն (45.6%) աշխատանքի է ընդունում իր ընկերության վերապատրաստվողին երկակի ուսուցումն ավարտելուց հետո:

Ընկերությունների գրեթե 64 տոկոսը համոզված է, որ «երկակի» ուսանողները տարբերվում են մյուսներից բարձր մոտիվացիայով և աշխատանքում անկախությամբ: Շատերը նաև արժեւորում են նրանց մասնագիտական հմտությունները (46.5%) և թիմում աշխատելու կարողությունը (45.9%): Եվ վերջապես, հարցված ընկերությունների երեք քառորդը (74%) ճանաչում է երկակի կրթությունը որպես ամենաորակյալ և ամենաարդյունավետ կրթություն՝ կրթության դասական ձևի համեմատությամբ: Այսպիսով, Գերմանիայում կրթական համակարգը արձագանքում է աշխատաշուկայի ժամանակակից միտումներին և պահանջներին:

«Երկակի» շրջանավարտների մեջ շատ հաջողակ հայտնի մարդիկ կան՝ Բերնարդ Շրայերը (Heidelberger Druckmaschinen AG ընկերության գործադիր տնօրեն), Հանս-Յուրգեն Բյուլենբերգերը (Sparkassen-Versicherung Sachsen-ի խորհրդի անդամ), Անդրեաս Բերնհարդը (Alcatel SEL-ի նախկին գործադիր տնօրեն): Երեքն էլ կիսանալի օրինակներ են, որ այդ նոր համակարգը գործում է:

Երկակի կրթությունը փոխադասվետ իրավիճակի օրինակ է և ուսանողների, և ընկերությունների համար:

Արդա ՍԱՐԳՍՅԱՆ  
ՀՀ ԿԳՄՆ ԿԶՆԱԿ հիմնադրամի  
չափորոշիչ լրամշակման  
և զարգացման բաժնի պետ



Էրֆուրտի համալսարանը



Հայդելբերգի համալսարանը

# Սարդարապատ

Խոսքը Պարույր ՍԵՎԱԿԻ, երաժշտությունը Էդգար ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

Երբ չի մնում ելք ու ճար,  
Խենթերն են գտնում հնար,  
Այսպես ծագեց, արեգակեց  
Սարդարապատի մարտը մեծ:

**Կրկներգ** - Չանգեր, դողանջեր,  
Սրբազան քաջերին կանչեք  
Այս արդար պատից:  
Սերունդներ, դուք ձեզ ճանաչեք  
Սարդարապատից:

Ավարայրից ջանք առանք,  
Այստեղ մի պահ կանգ առանք,  
Որ շունչ առած շունչներս տանք  
Սարդարապատի պատի տակ:

**Կրկներգ** - Չանգեր, դողանջեր,  
Սրբազան քաջերին կանչեք  
Այս արդար պատից:  
Սերունդներ, դուք ձեզ ճանաչեք  
Սարդարապատից:

Բայց մենք չընկանք, մենք միշտ կանք,  
Մենք չհանգանք՝ դեռ կգանք,  
Երբ տան զանգը, ահագանգը,  
Որ մեր հոգու պարտքը տանք:

**Կրկներգ** - Չանգեր, դողանջեր,  
Սրբազան քաջերին կանչեք  
Այս արդար պատից:  
Սերունդներ, դուք ձեզ ճանաչեք  
Սարդարապատից:

Maestoso e poco pesante

*mf* Secco, molto cresc.

S.  
A. Coro  
T.

*f*

B. 1. Երբ չի մը - նում ելք ու ճար, խենթ - երն են գտն - նում հը - ճար:  
2. Ա - վա-րայր-ից...

Այս - պես ծա - գեց. ա - ռե - գա - կեց. Սար-դա - րա-պա - տի մար - տը մեծ:

*f*

Չան-

գեր դո - դան - ջեր. սրը - բա - զան քա - ջե - ռին կան - ջեր

այս ար-դար պա - տից: Սե - րունդ - ներ դուք ձեզ ճա - նա - չեք

Սար-դա - րա - պա - տից: Բայց մենք չըն-կանք.

*ff* secco

## Սարդարապատ

սկզբը՝ էջ 12

մենք միշտ կանք. մենք շն-հան- գանք. դեռ կը - գանք՝ երբ տան շան - գը.

ա - հա - գան - գը. որ մեր հո - գու պարտ - թը տանք: երբ տան շան - թը.

ա - հա - գան - գը որ մեր հո - գու պարտ - թը տանք: Ջան - գիր. դու - դան

չեք. սըր - բա - գան բա - չե - ռից կան - չեք. այս ար-դար պա

սից: Սե - ղունդ - մեր դուք ձեզ ճա - ճա - չեք Սար - դա - բա - պա սից:

Սե - ղունդ-մեր դուք ձեզ ճա - ճա - չեք Սար-դա - բա - պա - սից:



Փորձիր լրացնել

Արցախյան

Ուղղահայաց

1. Արցախի սրբազան լեռը (3341մ.): 2. «Ծաղկիր, երկիր ..., ճախրիր ոգի հայրց, թող վեր հաննի, շողա հավերժ Յավատը մեզ պահող» («Ցնծա՛, Արցախ աշխարհ»): 4. Ստեփանակերտում ծնված հայ էստրադային երգիչ: 5. Միավորված հայկական մեխիքություն Արցախում: 6. Վանական համալիր Արցախի Մարտունու շրջանում: 7. Բանաստեղծ, մանկագիր (1927-2005), ծնված Ասկերանի շրջանի Խանձք գյուղում: 8. Գյուղ Արցախի Մարտունու շրջանում, որի տարածքում է գտնվում Շողակավանքը: 10. Արցախյան ասույթ՝ «Գուվեր ..., մունք ծառա»: 11. «... երազ, կյանք կա ու տենչ Պահված մեր քերթ երգ ու տաղում. Կուզեն կյանքում երգել անվերջ, երգով մեռնել Ղարաբաղում» («Չոն», Վազգեն Օվյան): 19. Եվրոպատգամավոր Ֆրանկ ..., «ադրբեջանի տիրապետության տակ Արցախի գոյությունը կնշանակի նոր ցեղասպանություն» խոսքերի հեղինակ: 21. Ստեփանակերտում ծնված հայ դերասանուհի, երգչուհի, հաղորդավարուհի, մասնագիտությամբ լեզվաբան թամարա ...: 23. Մարզկենտրոն Արցախում: 32. Թռչուն, որ պատկերված է ԼՂՀ-ի զինանշանի վրա: 38. Ասկերանի շրջանի Ծաղկաշատ գյուղում ծնված հայ ազատագրական պայքարի հայտնի գործիչ Նիկոլ ...: 39. Գետ Արցախում: 40. Ազգությամբ եզդի՝ ... Սլոյան, Քառօրյա պատերազմի մասնակից: 47. Ղարաբաղյան ազատագրական շարժման գործիչ: Շահունյանի ինքնապաշտպանության ուժերի հրամանատար՝ ... Սեդրյան (զոհվել է Գյուլիստանում, 1993 թ.): 48. Հայ մեծանուն պատմաբան, ով Արցախը համեմատել է «Հսկայական միջնաբերդի» հետ, առանց որի՝ «Անհնար է երեւակայել Հայաստանի սրտի, այն է՝ Արարատյան երկրի պաշտպանությունը»:

49. Արցախյան երկրորդ պատերազմի մասնակից, Արցախի հերոս՝ ... Հովհաննիսյան: 53. «Դու ... ես անառիկ, բարձունք սրբազան, վեհ անուն, Մասունք աստվածային, քեզնով ենք հավերժանում» («Օրհներգ Արցախի» խոսք. Վարդան Հակոբյան): 54. Արցախի Հանրապետության նախագահներից(անունը)՝ 2007-2020 թթ:

Հորիզոնական

3. Մեխիքությունների միությունը Արցախում: 5. Շուշիում ծնված հայ երգիծաբան, արձակագիր՝ Տմբալաչի ...: 9. Արցախցի երգիչ Սարիբեկ Սարգսյանի բեմական անունը: 12. Արցախի հերոս, գրող-հրապարակախոս: 13. Արցախյան ազատամարտի հերոս, Գետաշեն-Մարտունաշեն ենթաշրջանների հրամանատար՝ Թաթուլ ... (զոհվել է Գետաշենում, 1991թ.): 14. Արցախի նախարարական տան նախահայրը: 15. Քունգ-ֆուի աշխարհի 3-րդ առաջնության(2015թ.) բրոնզե մեդալակիր, արցախցի՝ ... Խաչյան: 16. Շուշիում ծնված անվանի պարուհի, երգչուհի, աշխարհի ժողովուրդների պարերի լավագույն կատարող, ԽՍՀՄ ժող. արտիստուհի(անունը): 17. Արցախի հերոս՝ ...Ղուլյան: 18. Մեծ մայրը արցախցու բարբառով: 20. Մեծ Հայքի Արցախ նահանգի Վայկունիք գավառի միջնադարյան անվանումը: 22. Արցախի հերոս, արցախյան շարժման ակտիվիստ(կին)՝ ... Գալստյան: 24. Արցախյան ազատամարտիկ, սփյուռքահայ Կարո Քահրեզյանի ծննդավայրը: 25. Գյուղ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանում: Գյուղի սահմանային գոտով հոսում է Կարկառ գետի վտակը: 26. Քաղաք, ուր 2006 թ.-ին Անդրեն առաջինն է ներկայացրել Հայաստանը Եվրատեսիլ երգի մրցույթին: 27. «Լեռների մեջ գլուխդ ... պահած, Կանգուն ես դու, իմ հայրենի Ղարաբաղ» («Ղարաբաղ», գուսան Բագրատ): 28.Այդպես է կոչվում քանդակագործ Սարգիս Բաղդասարյանի եւ ճարտարապետ Յուրի Հակոբյանի հուշարձան կոթողը՝ «... - պասսիկ»: 29. Արցախցի արձակագիր՝ Մարտիրոս ...: 30. ՀՀ ազգային հերոս, Արցախյան ազատամարտի հայ հրամանատար՝ ...Պողոսյան(զոհվել է 1992թ. Ասկերանի շրջանի Նախիջեւանիկ գյուղում): 31. Գյուղ Ասկերանի շրջանում: 33. Արցախյան պատերազմին մասնակից ջոկատ(անունը), հրամանատար՝ Պապյան: 34. Մայրաքաղաք Եվրոպայում, որի Ելիսեյան պալատի վարագույրները գործ-

վել են Ղարաբաղի մետաքսից(19-րդ դար): 35. Հայ գրող, «Մեզ չի՛ կարող մահն էլ զատել, մի հոգի ենք ու մի մարմին, Դու իմ Ղարսի, իմ Սասունի, իմ Մասիսի թա՛յ, Ղարաբաղ» տողեր ունեցող «Ղարաբաղի ողբը» բանաստեղծության հեղինակ: 36. Պետական քաղաքական գործիչ, Հաղուրթի ինքնապաշտպանության (1991-1992թթ.) ջոկատի շտաբի պետ՝ ... Սկրտչյան: 37. Ստեփանակերտի հյուրանոցներից: 38. Թաղեւոս առաքյալի աշակերտներից, ում գերեզմանին Արցախի Մարտունու շրջանում կառուցված է վանք: 41. Քաղաքադի շրջանի գյուղերից: 43.Գետ Արցախում՝ Թարթառ կամ ...: 44. «Ես եմ Արցախը» երգի խոսքերի հեղինակ՝ ... Սկրտչյան: 45. Ստեփանակերտում ծնված հայ երգչուհի(անունը), նրա երգերից են՝ «Ժինգյալ», «Երեւանի սիրուն տղա»: 46. Հայ քաղաքագետ, ով նախածեռնեց «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը՝ ... Սուրադյան: 50. Գյուղ Մարտակերտի շրջանում: 51. ... Ուրֆանյան, Արցախի հերոս (հետմահու), 2016 թ. քառօրյա պատերազմի մասնակից: 52. Գյուղ Արցախի Մարտունու շրջանում: 55. Մարտակերտի շրջանի Վանք գյուղում ծնված հայտնի գործարար եւ բարերար՝ ... Հայրապետյան: 56. Մեծ Հայքի տասներորդ նահանգը:

Կազմեց Վոլոդյա ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ



